

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ներկայ ամի Փետրուարի 16—22 ըստ կարգադրութեան Վրաստանի էքզարքոս բարձրաստիճան Պալլադիոսի հրաւիրեցաւ Վրաստանի թեմական եկեղեցականաց ժողով, մասնակցութեամբ բարեկարգիչ քահանայից:

Այս ժողովի վարչութիւնը կազմակերպելից յետոյ, բարձրաստիճան էքզարքոսն արաւ իւր առաջարկութիւնը ժողովին, որոնք 12 յօդուածներից էին բաղկացած և որոնք վերաբերում էին եկեղեցեաց և եկեղեցականաց բարեկարգութեանց ամեն կողմանէ:

Նորին Բարձր Սրբազնութեան արած առաջարկութիւններից առաջինը վերաբերում էր Աստուծոյ տաճարները բարեկարգ և ճոխ վիճակի մէջ պահպանելուն, մանաւանդ այն տաճարներն, որոնք նշանաւոր են իրանց հնութեամբ և պատմական նշանակութեամբ, յիշատակներով և աւանդութիւններով և կամ իրանց ճարտարապետական ոճով: Այս պարտքը թեմական եկեղեցականաց վերայ դնելով Գերապատիւ էքզարքոսը պատուիրում է նրանց հոգալ այդ հնութեանց նորոգութեանց մասին, հրահրելով իւրաքանչիւրն իւր վիճակում բարեպաշտ անձանց ի նուիրատուութիւն և օգուտ քաղելով ամեն դէպքերից, որպիսի են տրոմուլթեան կամ ուրախութեան հանդէսներն, որոնց ժամանակ աշխարհականք սովորաբար պատրաստ են լինում նուիրատուութեան համար: Ամեն բանասէր մարդու վերայ գերապատիւ էքզարքոսի առաջարկութիւնը պատմական յիշատակարար կազմող եկեղեցեաց և վանքերի նորոգութեան և պահպանութեան մասին շատ ախորժ և ուրախառիթ տպաւորութիւն է գործում, տեսնելով նորա մէջ քրիստոնէական ջերմեռանդութեան հետ եւ յարգանք ու գնահատումն պատմական յիշատակարանաց, որոնք կենդանի վկայք են ժողովրդեան անցեալ բարեպաշտ կեանքի:

Այս առաջարկութիւնն ու գաղափարը հարկաւոր էր, որ օղ զառնար և մեր թեմական եկեղեցականաց ու վանհարց աւանդներին, որպէս զի նոցա վիճակներում եղած բազմաթիւ երբեմն հոյակապ, իսկ այսօր գրեթէ աւերակ կամ կիսաւերակ



վանքերն ու հկեղեցիք արժանանային նոցա ու ադրութեան, հոգացողութեան, որպէս զի պահպանվէին գէթ կատարեալպէս անհետանալու վասնդից:

Դժուար է մեր վանքերի և եկեղեցեաց նշանաւոր մասի ցուալի դրութիւնը վերաբերել ժողովրդի նիւթական աղքատիկ վիճակին:

Մենք այդ աւելի վերաբերում ենք անտարբերութեան, որով տոգորված են ներկայումս թէ եկեղեցականք և թէ աշխարհականք, Այսպէս ենք մտածում, որովհետև մեր պատմութիւնը ցոյց է տալիս, որ մեր ազգի ամենաթշուառ դրութեան ժամանակ էլ, որպիսեաց մասին այժմ երեւակայել անգամ չենք կարող, դուրս են եկած սոսկակոյն վարդապետք, վանահայրք, որոնք, կարելի է ասել «չնչից» (ազգի ամենասուրճ և խեղճ ժամանակ) վերանորոգել են կամ կանգնել նոր հոյակապ շինուածներ:

Մեր ազգի կեանքում, 14, 15, 16, 17, և 18 դարերը ամենաթշուառ դարերն են եղած երբ Լէնկթեմուրի և նրան հետևող իշխանների պատերազմները և ապա Պարսից և Օսմանցոյ մէջ տեղի ունեցած կռիւներն, սոցա հետևանք եղող սուլի, նոյնպէս և երկրաշարժները ինչպէս խոտ հնձել են հայ ազգը, կոտորմամբ, գերութեամբ, յափշտակութեամբ և հարկահանութեամբ, բայց հէնց այդ թշուառութեանց ժամանակ տեսնում ենք շարունակ եկեղեցականք, որոնք վերականգնում են աւերած հոյակապ վանքերն և կամ նորերը կանգնում, միջոց գրոնելով ազգի լուծայից: Յիրաւի զարմանալի է, թէ այնպիսի ժամանակ, երբ Արարատեան նահանգում մնացած հայ գիւղերն ու գիւղաքաղաքները մատով կարելի էր համարել, երբ Ս. Էջմիածնայ Աթոռի վերայ դրած պարսկական հարիւր թուման հարկն (որքան այսօր իւրաքանչիւր արեղայ ռոճիկ է ստանում) այնքան ծանր էր, որ կաթողիկոսունք շրջելով ազգի մէջ քաղաքից քաղաք ու գեղից գեղ ու ժողովարարութիւն անելով չէին կարողանում վճարել— երբ Էջմիածնայ եկեղեցին այնպիսի խելճութեան մէջ է լինում, որ և ոչ անգամ նուիրական անօթներ, զգեստներ և այլ անհրաժեշտ պիտոյք ունեցել է, բոլորը յափշտակած լինելով— և ահա այսպիսի նեղ ու թշուառ ժամանակ կամ անյապաղ նրանից յետ տեսնում ենք հոյակապ



վանքերի վերանորոգութիւնը և կամ նորերի կանգնումն: Կարծես մի գիւթական գաւազանի շարժմամբ ամենայն ինչ կատարուում էր, ոչնչից ինչ ստեղծելով: Կարծես այն հալածեալ, չարչարեալ, ամեն նեղութեանց մէջ ընկղմած եկեղեցականն ու աշխարհականը, հէնց այդ դրութեան մէջ աւելի արի սիրտ, հոգի և անընկճելի հաստատութիւն կամբի ստանում էին և զոհաբերութեան պատրաստականութիւն: Իրաւ է, որ կռանի հարուածների տակ երկաթը ամրանում է: Կարծես թշուառութիւնը միայն ընդունակ են մորդուս իւր մխիթարութիւնն Աստուծոյ և հոգեւոր զբաղմանց մէջ որոնելու, այնքան թոյլ է նորա ընտելութիւնը գէպի բարին և հոգեւորն, երջանկութեան և ապահովութեան ժամանակ: Այսպէս է իրողութիւնն, որովհետեւ մենք այն նեղ և թշուառ ժամանակներում տեսնում ենք անդադար վերանորոգութիւնը ու կանգնումն հոյակապ յիշատակարանների, մինչդեռ այսօր, որ համեմատաբար անսահման բարօրութեան, նիւթական մեծ ապահովութեան և երկարատեւ խաղաղութեան ժամանակ է, անհատես ենք լինում միայն մեր գեղեցիկ և հոյակապ պատմական յիշատակարանների օրից օր խանգարման և աւերման: Այն խղճութեան ժամանակ կարծես մի բարձր, վսեմ զգացմունք տիրում էր ամէնքին, այնպէս, որ խեղճ հայ արեղան մուրացկանութեամբ ժողոված լումաներն, աղքատիկ խեղճ ցնցոտեաց մէջ փաթաթված հայ գիւղացին իւր օրապահիկն և համեմատաբար նոյնպէս աղքատ հայ քաղաքացին իւր չափաւորութիւնից տնտեսած արծաթը թափում էին իրանց նախնեաց յիշատակարանի վերայ, անկարող նոցա աւերման և քանդվելուն վերայ սառնասրտութեամբ նայելու և սուքա կրկին իրանց հոյակապ տեսլեամբ մխիթարում էին իրանց զաւակներին: Իսկ այսօր, այս ապահովութեան և հարստութեան ժամանակ, կարծես անտարբերութեան և սառնասրտութեան հոգի սաւառնում է ամենքի վերայ: Ցաւալի է, որ ճոխ և հարուստ զգեստներով զարդարուած թեմերի, վիճակների և վանքերի կառավարիչ եկեղեցականք, շուայլութեան մէջ թաւալող, ոսկով և արծաթով զարդարուած, հարիւր հազարների և միլիոնների տէր քաղաքացիք ու կալուածատեալք, և իրանց անվայել ճոխութեան ձգտող գիւղացիք մեծ մասամբ ամենայն անտարբերութեամբ նայում են իրանց նախնեաց սուրբ



յիշատակների աւերակներին, զարմանք ցոյց տալիս և անցնում գնում են, երբեմն էլ պարծենում միայն իրանց նախնեաց սխրագործութիւններով:

Ձկայ մէկն, որ մտածէ այդ աւերակների քարը քարի վերայ դնելու մասին, Միթէ ներկայն անցեալի յաջորդը չէ, միթէ ներկայ եկեղեցականք նոյն հայ եկեղեցւոյ պաշտօնեայք չեն, միթէ ներկայիս հայք իրանց նախնեաց սերունդը չեն, նոցա երակների մէջ նոյն հայ արիւնը չէ՞ շրջում: Ինչիցնէ ուրեմն այն ահագին և վնասակար տարբերութիւնը անցեալի և ներկայի մէջ հոգեւոր ջերմեւանդութեան կողմանէ:

Այս վնասակար անտարբերութիւնը ծագել է եկեղեցական դասի և ժողովրդեան մէջ մտած սառնութիւնից, նոցա մէջ կարեւոր սերտ կապի բացակայութիւնից, հանգամանքների բերմամբ և արտաքին ազդեցութեամբ ներմուծած անջատումից, որով եկեղեցական դասն և ժողովուրդը կարծես իրար խորթ զասակարգեր են կազմում. իւրաքանչիւրն իւր որոշ պարտականութեամբ և իրաւունքներով, որոնց ձեւական կատարումն բաւական է համարվում պարտազանց չգտանված համարուելու համար: Եկեղեցականը եկեղեցւում սպասաւորելով և եկեղեցական խորհուրդները կատարելով և ժողովրդականն էլ գոցա համար նորա օրապահիկն աւելի կամ պակաս առատաձեռնութեամբ հոգալով վերջացրած են համարում իրանց հաշիւները միմեանց հետ: Այս ձեւակատարութիւնից յետոյ թէ եկեղեցականն և թէ աշխարհականն անձնատուր են իրանց մասնաւոր ընտանեկան կամ անձնական գործերը տնօրինելուն, որպէս թելադրում են իւրեանց միջոցներն և ժամանակի կենսական անվերջ պահանջները շռայլութեան և զուարճասիրութեան: Ձկայ երկու դասերի այն սերտ յարաբերութիւնն, որով մէկը ոգեւորողի և հոգեկան զուարճութեան ու մխիթարութեան զգացմունքը զարթուցանողի պաշտօն կատարէր և միւսը այդ զգացմունքով ղեկավարուած իւր զուարճութիւնն ու մխիթարութիւնը գէթ մասամբ հոգեկան և բարեգործական մտածողութեանց և գործողութեանց մէջ գտնէր և այսպէս հոգւոյ և մարմնոյ պահանջների մէջ հաւասարակշռութիւն պահպանուէր, որով իսկապէս կուենար հայ ժողովուրդը հասարակական կեանք: Այսպէս թէ նախնեաց յիշատակարաններ



կպահպանուէին և թէ նորերը կկանգնուէին և ապահոված կլինէին, որովհետեւ ներկայումս այնքան նիւթական ոյժ կայ մեր ժողովրդի մէջ, որ նա իւր բոլոր հասարակական հաստատութիւնք թէ եկեղեցիք և թէ մանաւանդ գալորոցներն ու այլ բարեգործական հաստատութիւնք կարող էր վայելուչ և արդիւնաւոր վիճակի մէջ պահել, միայն որ նա անչափաւորութեան պահանջների հետ և մոռաւոր ու հոգեկան պահանջների անհրաժեշտութիւնն էլ հասկանար և զգար: Այս վիճակի մէջ կարող էր նրան դնել եկեղեցականաց նորա հետ սերտ յարաբերութիւնն և նոցա իրանց պաշտօնը ճշտութեամբ կատարելը, միշտ յորդորելով, խրատելով և նորա ուշքն ու միտքը հոգեւոր և մոռաւոր զբաղմանց վերայ դարձնելով ու նորա սիրտը բարեգործական զգացմունքներով պարարելով: Եւ այս աւելի հայ ժողովրդի մէջ իրագործելը հեշտ է, քանի որ կարծես նուիրատուութիւնը նրան բնածին է: Միթէ սրան ապացոյց չէ՞, որ երբ—որեւէ նուիրատուութեան հրաւեր է լինում կամ սովի կամ հրդեհի և կամ որեւէ ընկերութեան կարեաց պատճառով, հայ ժողովուրդն ամենայն յօժարութեամբ տալիս է: մինչև անգամ ինքն օգնութեան կարօտ հայ հասարակութիւնն էլ չէ զլանում իւր լուծման գցել այդ հրաւերով կազմուած փանձառակի մէջ: Բազմաթիւ այսպիսի ժողովուրդ հովուող մի ընդոր ձալ վիճակի առաջնորդ կամ յաջորդ ինչ չէ կարող գործել: Ինչ հրաշքներ կարող չէ կատարել, եթէ միայն իւր հանգստութեան վերայ չմտած է, եթէ միայն իւր պաշտօնը լոկ ձեռով կատարելու վերայ չխորհէ, եթէ միայն իւր անափառութիւնը շոյշոյող երեւակայական իրաւանց վերայ չհոգայ, այլ հոգւով և սրտով անձնատուր լինի: Նրան, որ ժողովրդեան հոգեւոր պիտոյքը հոգայ, խրատելով, յորդորելով, ուր հարկն է եւ յանդիմանելով:

Քաւ լիցի մեզ մտածել, որ այն եկեղեցականք, որոնք ազգի ամենաթշուառ և աղքատիկ վիճակի ժամանակ էլ երկրաշարժից կամ աւերածութիւններից քանդված հաստատութիւնքը կամ նորերը վերականգնել են, իրանց գիտութեամբ, աշխարհահայեցողութեամբ կամ խելքով աւելի բարձր են եղած ներկայ եկեղեցականներից, ոչ, բնաւ ոչ, այլ միայն նոքա ժողովրդի ցաւին ցաւակից, չարչարանքին չարչարակից, ուրախու-



Թեանը ուրախակից են եղել, միասին ապրել, միասին մեռել են, սերտ կապուած են եղել նորա հետ, իբրեւ հայր և որդի ապրել են, սիրել են և սիրվել, խրատել են և յանդիմանել, առանց աչառութեան, եւ այսպէս վառ և լարուած են պահել ժողովրդեան մէջ հոգեւոր զգացմանց կրակը: Եթէ նոքա այցելել են իրանց հօտին քաղաքից քաղաք և գիւղից գիւղ շրջելով, նոքա ամենուրեք երեւցել են ոչ թէ իբրեւ միայն իշխանաւոր, այլ աւելի իբրեւ հայր սրտացաւ, բաւականանալով ինչով բաւականնում էր ժողովուրդը, առնելով ուստի հնար էր և տալով ուր անհրաժեշտ էր: Այս են ցոյց տալիս միջ մեր նուիրակներին, մեր առաջնորդների ու վանահայրերի պատմութիւնքը, այնպիսեաց, որոնք շինողք եղած են:

Նոյն դիրքը բռնելով այսօր հայ եկեղեցականը կարող է մեծամեծս գործել յօգուտ հայ եկեղեցեաց պայծառութեան և ժողովրդեան հոգեւոր երջանկութեան, ու նախնեաց յիշատակարանների պահպանութեան, որ վկայք են հայերի կրօնասիրութեան գարեբրի ընթացքում:

### Ս. ԷԶՄԻՆԺՆԻ ԳՐԱԳՐԱՐՆ

Էջմիածնի դրագարանի ամենանշանաւոր ձեռագիրներից մէկն է ՊՁ 892ը, որ ձաշոյց է Հեթում Պարոնին, ապա Թագաւոր Հեթում երկրորդ անունով, որդի Լեոն երրորդի: Հեթում երկրորդը Թագաւորեց 1289 թուականին և մի քանի անգամ կրօնաւորեցաւ, հրաժարուելով աթոռից և կրկին Թագաւորեց և մեռաւ Թագաւորահայր տիտղոսը կրելով: Ըստ կրօնաւորութեան Յովհաննէս անուանեցաւ:

Այս ընտիր ձեռագիրը բոլորագիր է և գրած է 1286 թուականին Քրիստոսի, ընտիր մագալաթի վերայ: Գրքի երկայնութիւնն է 7 1/2 վերջոյ, լայնութիւնը 6 վերջոյ և թանձրութիւնը 2 վերջոյ: Գիրքը բաղկանում է 940 մեծագիր երեսներից, բացի յիշատակարանից ունի 13 երես: Առաջին հինգ թերթերը ցանկ են և վեցերորդ թերթի վերայ զգեստաւորուած, ձեռքին մի գիրք բռնած նկարած է մի եկեղեցական. պատկերի տակ գրած է «Սուրբ Սահակն է, թո՛ւն սուրբ Գրիգորոյ, գրոցս շի-